


ԿՈՎԻԴ-19 համաճարակի ժամանակ Էխոսրտագրության ծառայության հակավարակային պաշտպանությունը



ԿՈՎԻԴ-19 համաճարակի ժամանակ քաղաքականության / պրոտոկոլների ամփոփումը

1. Որոշե՛ք հետազոտությունների հետաձգելիությունը

- Իդենտիֆիկացրե՛ք եւ հետաձգե՛ք բոլոր պլանային հետազոտությունները
- Իդենտիֆիկացրե՛ք եւ կատարե՛ք միայն անհատաձգելի հետազոտությունները

2. Ստուգե՛ք պացիենտի ԿՈՎԻԴ-19 կարգավիճակը

- Չունի
- Կասկածվող
- Հաստատված

3. Ապահովե՛ք պաշտան անհատական պաշտպանության միջոցների առկայություն

4. Տրանսէզոֆագեալ Էխոսրտագրությունը բարձր ռիսկի պրոցեդուրա է. հետաձգե՛ք երբ հնարավոր է, իսկ կասկածվող/հաստատված վարակի դեպքում կատարեք վարակի օդային փոխանցումից պաշտպանող անհատական պաշտպանական հանդերձանքով

5. Կազմակերպությունում անհատական պաշտպանական միջոցները խնայողությամբ օգտագործեք

- Կասկածվող/հաստատված վարակի պարագայում հետաձգե՛ք ոչ անհետաձգելի հետազոտությունները
- Պորտատիվ ուլտրաձայն (POCUS)՝ հետազոտությունը կարող է կատարել վերապատրաստված մասնագետը որն արդեն զբաղվում է պացիենտով

6. Էխոսրտագրություն իրականացնելիս շփման ծավալը նվազեցրե՛ք

- Կատարե՛ք սահմանափակ, միայն կոնկրետ հարցերի վրա կենտրոնացած հետազոտություն
- Ղեկավարվե՛ք այլ հետազոտությունների (այդ թվում՝ POCUS-ի) արդյունքներով

7. Եզրակացման սենյակում վարակը նվազեցրե՛ք

- Կազմակերպե՛ք գրանցված ուլտրաձայնային պատկերների հեռակա եզրակացումը եւ հեռակա Էխոսրտագրությունը
- Հաճախակիորեն ախտահանե՛ք համակարգչի ստեղծաշարը, մկնիկը, մակերեսները, աթոռները, դռների բռնակները
- Արգելե՛ք Էխոսրտագրության եզրակացման սենյակում մարդկանց կուտակումը

8. Իդենտիֆիկացրե՛ք բարձր ռիսկի ունեցող (>60տ., ընկճված իմունային համակարգով, քրոնիկ / սիրտ-անոթային հիվանդություններով, հղի եւ այլ) բուժաշխատողներին եւ նրանց գործառնությունները վերանայե՛ք

Կանխարգելման եւ անհատական պաշտպանական միջոցների (PPE) տեսակները

	Ձեռքերի վաճուճ	Ձեռնոցներ / Կրկնակի ձեռնոցներ	Իզոլացիոն խայթ	Վիրաբուժական դիմակ	N-95 կամ N-99 դիմակ	Դեմքը պաշտպանող վահանակ	Մարտկոցով աշխատող օդը մաքրող ռեսպիրատոր (PAPR)	Վիրաբուժական թասակ	Բախիկներ
Ստանդարտ պաշտպանություն	✓	✓		✓					
Կաթիլային փոխանցումից պաշտպանություն	✓	✓	✓	✓ *	✓ *	✓	✓	✓	✓
Օդային փոխանցումից պաշտպանություն**	✓	✓	✓		✓	✓	✓	✓	✓

* Վիրաբուժական դիմակը կարող է օգտագործվել վարակի կաթիլային տարածումից պաշտպանության համար՝ N-95, N-99 դիմակների խնայման նպատակով

** Պացիենտի տեղակայումը կարող է ազդել պաշտպանության մակարդակի վրա (օրինակ՝ ինտենսիվ թերապիայի բաժանմունքի բոլոր պացիենտների հետ աշխատելիս վարակի օդային տարածման դեմ պաշտպանություն)

Սա ներկայիս պրակտիկայի / հանձնարարականների վրա հիմնված ընդհանուր ուղեցույց է, որը տեղական պրոցեդուրաների եւ պրակտիկային համապատասխանեցնելու համար ենթակա է փոփոխության